Հաստատում եմ՝

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր,

տեխն.գ.դ., պրոֆեսոր _____ Ռ.Ռ. Սահակյան

«26» 12 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Համիդռեզա Կամիարի «Մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանի կրթության համակարգում» խորագրով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Համիդռեզա Կամիարի «Մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանի կրթության համակարգում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստում (Արձ. թիվ 10, կայացած՝ 25.12.2024թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ք. Վիրաբյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Հարությունյանը, Լ. Մարուքյանը, Զ. Գրիգորյանը, դասախոս Ն. Հովհաննիսյանը, հ.գ.թ., դոցենտներ Ն. Կոստանդյանը, Հ. Ավագիմյանը, Ա. Ղազարոսյանը, Մ. Մազմանյանը, դասախոսներ Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը:

Մեծահասակների կրթությունն անհրաժեշտություն է հասարակության զարգացման և բարգավաճման համար, այն կարևոր է սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային փոփոխություններն ակտիվորեն վերահսկելու տեսանկյունից:

Իրանի համար կրթության համակարգի զարգացումն առաջնահերթություն է: Իրանի մեծահասակների կրթության ուսումնասիրությունը, խնդիրների վերհանումն անհրաժեշտ են իրանական հասարակության և կրթական համակարգի բարեփոխման ու զարգացման համար, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Այն ներառում է 26 աղյուսակ, 2 գծապատկեր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 177 էջ:

Ատենախոսության առաջին «*Իրանի կրթության համակարգը*» խորագրով գլխում, որն ունի չորս ենթագլուխ, Համիդռեզա Կամիարը դիտարկել է Իրանի կրթության համակարգի նպատակները և գործառույթները, զարգացման համառոտ պատմությունը, ներկայացրել է հանրակրթությունն ու բարձրագույն կրթությունն Իրանում: Իրանի կրթության համակարգի ընդհանուր նպատակները խմբավորվել են գաղափարախոսական, բարոյական, գիտակրթական, մշակութային և գեղարվեստական, հասարակական, էկոլոգիական, առողջապահական, քաղաքական, տնտեսական ուղղություններով, որոնք նկարագրվել են կրթության յուրաքանչյուր մակարդակում:

Ատենախոսության երկրորդ «*Մեծահասակների կրթության առանձնահատկությունները*» խորագրով գլուխը բաղկացած է յոթ ենթագլխից, որտեղ հեղինակի կողմից քննվել և լուսաբանվել են մեծահասակների կրթության ոլորտի գլխավոր սահմանումները, վերլուծվել նրա հիմնարար սկզբունքները, գործառույթներն ու մոտեցումները: Այս գլխում հանգամանորեն ուսումնասիրվել է մեծահասակների կրթության վերաբերյալ տարբեր ձևակերպումներ, ներկայացվել են այս ոլորտին առնչվող ու լայն կիրառում ունեցող մի շարք եզրույթներ՝

«անդրագոգիկա», «ֆորմալ կրթություն», «ոչ ֆորմալ կրթություն», «շարունակական կրթություն» և «գրագիտություն կամ գրաճանաչություն»:

Ներկայումս մեծահասակների կրթությունը զարգացած և թույլ զարգացած երկրներում ունի տարբեր շեշտվածություն: Զարգացած երկրներում «մեծահասակների կրթություն» ասելով հիմնականում հասկանում են շարունակական և ցկյանս կրթությունը, գիտելիքահեն հասարակության ձևավորումը, մեծահասակների (հատկապես կանանց) կրթությունը: Թույլ զարգացած երկրներն ունեն աղքատության բարձր ցուցանիշ և չեն կարող ձեռնարկել ու իրականացնել մեծածախս ուսումնական ծրագրեր, այդ իսկ պատճառով իրագործում են կրթական այնպիսի ծրագրեր, որոնք ունեն համազգային, համապետական նշանակություն, ինչպես օրինակ՝ անգրագիտության կրճատումը:

Ատենախոսության երրորդ՝ «*Մեծահասակների կրթության կազմակերպումն Իրանում*» խորագրով գլխում, որը կազմված է վեց ենթագլխից, ներկայացված են Իրանում գրագիտության և կրթության մակարդակի ընդհանուր պատկերը, մեծահասակների կրթության բնագավառում իրականացվող գլխավոր ծրագրերն ու քայլերը, առկա բացթողումներն ու խնդիրները, լուծման ուղիները: Այս գլխում մեկնաբանվել են գրաճանաչության և անգրագիտության մասին տարբեր ընկալումները, անգրագիտության տեսակները, համակարգչային գրագիտության անհրաժեշտությունը:

Այս գլխում դիտարկվել են Իրանում մեծահասակների կրթության և գրագիտության ոլորտի դժվարություններն ու մարտահրավերները երեք տեսանկյունից՝ կառուցվածքային, կառավարչական-ռազմավարական և միջավայրային գործոններ:

Ատենախոսության չորրորդ՝ «*Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն*» խորագրով գլխում ներկայացված է հարցաթերթի միջոցով կատարված հետազոտությունը: Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են Իրանի Խորասան Ռազավի նահանգի ուսումնական հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ, բուհերի դասախոսներ, գրասենյակային աշխատողներ, մանկավարժական բուհերի ասպիրանտներ, ինչպես նաև գրագիտության դասընթացներում սովորողներ՝ աշխատավորներ:

Այս գլխում ներկայացված է սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսն ունի 7 գիտական հոդված:

Հարկ ենք համարում նշել Համիդռեզա Կամիարի ատենախոսական աշխատանքի արժեքավոր կողմերը.

✓ հեղինակի կողմից կատարվել է հիմնահարցի տեսական հիմքերի բազմակողմանի վերլուծություն,

✓ վերհանվել են և գնահատվել Իրանում մեծահասակների կրթության դժվարություններն ու մարտահրավերները,

✓ առաջարկվել են մեծահասակների կրթության բարելավման ուղիներ,

✓ իրականացվել են հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումներ:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Ատենախոսության երկրորդ գլխի 2.3 ենթագլուխը վերնագրված է «Անդրագոգիկայի սահմանումը»: Կարծում ենք վերնագիրը կարելի էր այլ կերպ ձևակերպել:

2. Աշխատանքի համար նպատակահարմար կլիներ 2.5 և 2.6 ենթագլուխները միավորված ներկայացվեին:

3. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում նշվում են մեծահասակների կրթության ոլորտի թերությունները: Ենթադրվում է, որ հաջորդ դրույթում կնշվեն այն մոտեցումները, խնդիրները, գործոնները, որոնք կնպաստեն վերոնշված թերությունների վերացմանը և համակարգի արդյունավետության բարձրացմանը, սակայն ներկայացված դրույթը կրում է ընդհանրական բնույթ:

4. 6-րդ եզրակացությունը վերանայման և հստակեցման կարիք ունի:

5. Աշխատանքում կան լեզվական, համակարգչային բացթողումներ:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Համիդոեզա Կամիարի «Մեծահասակների կրթության հիմնախնդիրն Իրանի կրթության համակարգում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և գիտական նշանակություն, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,

մ.գ.թ., դոցենտ Լ.Գ. Բաղդասարյան

Լ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ-ի գիտքարտուղար,

մ.գ.թ., դոցենտ Ս.Ս. Բեժանյան